Քաղվածք

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն 2

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2017 թվականի հունիսի 23-ի նիստի

Նախագահում էր՝ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը:

Մասնակցում էին կոլեգիայի անդամներ՝ Արմեն Հարությունյանը, Հայկ Ասլանյանը, Դավիթ Մելքոնյանը, Վահե Հարությունյանը, Վահագն Մուրադյանը, Արտակ Հարությունյանը, Գևորգ Բաղդասարյանը, Վահե Ռաֆայելյանը, Եղիազար Ավագյանը և Ռաֆֆի Ասլանյանը:

Ներկա էին՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Տ.Ամբարյանը, ՀՀ գլխավոր դատախազության ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Փանոսյանը, ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետի տեղակալ Ա.Կուբանյանը, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ Մ.Հակոբյանը, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներ Կ.Կարապետյանը, Գ.Գասպարյանը և Դ.Կարապետյանը, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ Ռ.Խաչատրյանը, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ա.Աֆանդյանը, Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների դատախազ Ս.Խաչատրյանը, Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազ Գ.Գևորգյանը, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ Ա.Սիմոնյանը, Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Ա.Չիչոյանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Ա.Արսենյանը, Արարատի մարզի դատախազի պաշտոնակատար Ա.Աղայանը, Արմավիրի մարզի դատախազ Վ.Հովհաննիսյանը, Արագածոտնի մարզի դատախազ Դ.Վեքիլյանը, Գեղարքունիքի մարզի դատախազ Ս.Մնացականյանը, Լոռու մարզի դատախազ Գ.Էլիզբարյանը, Կոտայքի մարզի դատախազ Վ.Միլիտոնյանը, Շիրակի մարզի դատախազ Կ.Գաբրիելյանը, Տավուշի մարզի դատախազ Վ.Գրիգորյանը, Վայոց ձորի մարզի դատախազ Ն.Ավագյանը, Սյունիքի մարզի դատախազ Վ.Հարությունյանը, ՀՀ դատախազության աշխատակազմի ղեկավար Հ.Նավասարդյանը և ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գ.Թովմասյանը:

Հրավիրվել և կոլեգիայի նիստին մասնակցում էին.

Օրակարգի 1-ին հարցով՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Ա.Ասատրյանը, ՀՀ ԿԱ ոստիկանության պետի տեղակալ Վ.Եղիազարյանը, ՀՀ ԿԱ ազգային

անվտանգության ծառայության քննչական վարչության պետ Մ.Համբարձումյանը, ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետ Թ.Պետրոսյանը, ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետ Վ.Ղահրամանյանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության պետի պաշտոնակատար Ա.Վարդանյանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետ Գ.Սիմոնյանը:

Օրակարգի 2-րդ հարցով՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալ Ա.Սաքապետոյանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության պետի պաշտոնակատար Ա.Վարդանյանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության պետ Ս.Սինանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. **2014-2015 թվականների ընթացքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերի առթիվ քննված քրեական գործերով նախաքննության վիճակի քննարկումը:**

Զեկուցող՝

ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության պետ Վ.Մուրադյան

Արտահայտվեցին՝ Հ.Ասլանյանը, Դ.Մելքոնյանը, Գ.Բաղդասարյանը, Կ.Կարապետյանը, Ա.Ասատրյանը, Վ.Եղիազարյանը, Թ.Պետրոսյանը, Վ.Ղահրամանյանը, Գ.Սիմոնյանը:

Լսելով և քննարկելով ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության պետ Վ.Մուրադյանի զեկույցը՝ 2014-2015 թվականների ընթացքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերի առթիվ քննված քրեական գործերով նախաքննության վիճակի վերաբերյալ, ՀՀ դատախազության կոլեգիան նշում է, որ 2014 թվականի ընթացքում քաղաքացիներին ոստիկանության և այլ մարմինների բաժիններում ապօրինի պահելու, նրանց փաստացի ազատությունից զրկելու, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվել է 78 քրեական գործ, որոնցից՝ 1 քրեական գործ՝ 3 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 44 քրեական գործի վարույթը կարճվել է (2-ը՝ հանցագործության դեպքի, 42-ը՝ պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով):

Հանցագործության դեպքի բացակայության հիմքով վարույթը կարճված քրեական գործերով սուտ մատնություն կատարելու դեպքերի առթիվ հարուցվել է 2 քրեական գործ:

2014 թվականի ընթացքում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ենթադրաբար խոշտանգման և վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացված 103 հաղորդումից 4-ը վերաբերել է ՀՀ ԱՆ ՔԿ վարչության իսկ 99-ը՝ ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներին:

2015 թվականի ընթացքում քաղաքացիներին ոստիկանության և այլ մարմինների բաժիններում ապօրինի պահելու, նրանց փաստացի ազատությունից զրկելու, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվել է 106 քրեական գործ, որոնցից՝ 1 քրեական գործ՝ 1 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 68 քրեական գործի վարույթը կարճվել է (2-ը՝ հանցագործության դեպքի, 66-ը՝ պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով):

Հանցագործության դեպքի բացակայության հիմքով վարույթը կարճված քրեական գործերով սուտ մատնություն կատարելու դեպքերի առթիվ հարուցվել է 2 քրեական գործ:

ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին 2 որոշում դատախազի կողմից վերացվել է:

2015 թվականի ընթացքում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ենթադրաբար խոշտանգման և վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացված 108 բողոքից 3-ը վերաբերել է քննչական կոմիտեի, 8-ը՝ ՔԿ վարչության իսկ 97-ը՝ ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներին:

Կոլեգիան փաստեց, որ հաշվետու ժամանակահատվածում պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով կարճված քրեական գործերը կարելի է դասակարգել երկու խմբի՝

1. գործեր, որոնցով ենթադրաբար խոշտանգման ենթարկված անձանց մոտ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել և ապացույցների բավարար համակցությամբ չեն ապացուցվել ինչպես խոշտանգման, այնպես էլ սուտ մատնություն կատարելու փաստերը,

2. գործեր, որոնցով ենթադրաբար խոշտանգման ենթարկված անձանց մոտ թեև հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ, սակայն ապացույցների բավարար համակցությամբ չեն ապացուցվել ինչպես խոշտանգման, այնպես էլ սուտ մատնություն կատարելու փաստերը:

ՀՀ կողմից խոշտանգումը պատշաճ քրեականացնելու հարցը բարձրացվել է դեռևս 2012 թվականի մայիսին, երբ Հայաստանի Հանրապետությունը քննարկման էր ներկայացրել ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարման հերթական զեկույցը: ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում նշել էր, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է պատշաճ ձևով քրեականացնի խոշտանգումը՝ ապահովելով արարքի հանրային վտանգավորությանը համապատասխան խիստ պատիժ:

Դրան համապատասխան 2015 թվականի հուլիսի 18-ին ուժի մեջ մտած օրենքով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվեց ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին

հոդվածին համահունչ խոշտանգման համար քրեական պատասխանատվություն նախատեսող 309.1-րդ հոդվածով:

Կոլեգիան արձանագրեց, որ 2015 թվականի ընթացքում խոշտանգումների դեպքերի վերաբերյալ քննված քրեական գործերից 8-ը հարուցվել են ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով, որոնցից 1-ը հանցակազմի բացակայության հիմքով կարճվել է, 7-ի նախաքննությունը փոխանցվել է 2016 թվական:

2015 թվականի ընթացքում խոշտանգումների դեպքերի վերաբերյալ քննված քրեական գործերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ առանձին դեպքերում բարդություններ են առաջանում ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու հարցում: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հիշյալ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու համար քրեական հետապնդման մարմնին քրեական գործ հարուցելու փուլում պետք է հայտնի լինեն տեղեկություններ անձին ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու վերաբերյալ, որպիսի հանգամանքի մասին տեղեկություններ չունենալու, սակայն առերևույթ բռնության կիրառման մասին տվյալների առկայության պայմաններում քրեական հետապնդման մարմինները ստիպված են լինում քրեական գործ հարուցել ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ բռնության գործադրմամբ զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքի առթիվ:

Խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննության եվրոպական չափանիշները (անկախություն և անկողմնակալություն, ամբողջականություն, անհապաղություն, իրավասություն, տուժողի ներգրավվածություն և հասարակական վերահսկողություն) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահաստատել է Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի, Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործերով կայացրած որոշումներում:

<u>Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետևյալ ընթացակարգային խախտումները</u>.

- քրեական գործի հանգամանքները բացառապես հիմնվել են իրադարձությունների մասին ոստիկանների կողմից տրամադրված տարբերակի վրա: Արդյունքում, դիմումատուն դարձել է այդ վարույթի միակ մեղադրյալը, մինչդեռ նշված ոստիկանները երբեք չեն համարվել հնարավոր կասկածյալներ և, ավելին, մասնակցել են միայն որպես վկաներ,
- քննություն իրականացնող մարմիններն առանց որևէ հիմնավորման նախապատվությունը տվել են ոստիկանների կողմից տրված վկայությանը և դրանով, կարելի է ասել, չեն ցուցաբերել անհրաժեշտ օբյեկտիվություն և անկախություն,
- դատաբժշկական փորձաքննությունը թեև նշանակվել է դեպքի հաջորդ օրը, սակայն անցկացվել է դեպքից օրեր անց,
- արդյունքում կազմված փորձագետի եզրակացությունը չէր պարունակում որևէ նշում դիմումատուի կրծքավանդակի և կողոսկրերի վնասվածքների վերաբերյալ, ինչն ընդամենը մի քանի օր առաջ արձանագրվել էր հիվանդանոցի բժիշկների կողմից,
- եզրակացությամբ որևէ պատասխան չէր տրվել քննիչի կողմից առաջադրված հիմնական հարցերից մեկին, այն է՝ թե դիմումատուի ամորձիին հասցված վնասվածքը պատճառվել է մե՞կ, թե՞ մի քանի հարվածով,

- կրկնակի դատաբժշկական փորձաքննությունը կատարվել է զգալի ժամանակ անց, որի հիմնական պատճառն այն էր, որ այդ եզրակացության պատճենը ներկայացվել է դիմումատուին այն կազմվելուց միայն մոտ մեկուկես ամիս հետո: Արդյունքում, նոր դատաբժշկական փորձաքննությունն անցկացվեց դեպքից մոտ երեք ամիս հետո,

- քննություն իրականացնող մարմինները չեն իրականացրել գործով այլ բժշկական ապացույցների գնահատում, մասնավորապես՝ հիվանդանոցի արձանագրությունների գնահատում, որոնցով, դիմումատուի ամորձիներին հասցված վնասվածքներից բացի, բացահայտվել են նաև նրա կրծքավանդակին և կողոսկրերին հասցված վնասվածքներ,

- չնայած դիմումատուի վնասվածքների լրջությանը՝ քննություն իրականացնող մարմինները չեն ուսումնասիրել հիվանդանոցում կազմված փաստաթղթերը, իսկ բժիշկները հարցաքննվել են դեպքից մոտ երկուսուկես ամիս հետո: Արդյունքում եվրոպական դատարանը եզրահանգել է, որ քննիչներին չի հաջողվել իրականացնել կարևոր նշանակություն ունեցող բժշկական ապացույցների՝ համապատասխան ժամկետներում, պատշաճ և օբյեկտիվ ձեռքբերում ու գնահատում,

- քննիչն անմիջապես չի մեկուսացրել և հարցաքննել դեպքին ներգրավված ոստիկաններին՝ դրանով իսկ չի կանխվել հնարավոր պայմանավորվածությունը,

- ոստիկանների հարցաքննության ժամանակ նրանց տրված հարցերը չեն գերազանցել մեկը կամ երկուսը, և դրանք հիմնականում սովորական բնույթի հարցեր են եղել և չեն պարունակել հստակեցման տարրեր,

- որևէ փորձ չի արվել դիմումատուի իրավաբանին հարցաքննելու առումով, ով ակնհայտորեն ներկա է եղել դեպքի գիշերը վերջինիս հարցաքննության ժամանակ կամ այն ոստիկանին հարցաքննելու առումով, ով կազմել է արձանագրություն՝ նշելով, որ դիմումատուն իրեն վատ է զգացել և պահանջել է բժշկական օգնություն,

- դիմումատուի և ոստիկանների առերեսումներն անցկացվել են ուշացումներով՝ ամիսներ անց՝ դրանով զգալիորեն նվազեցնելով այս միջոցների արդյունավետությունը, դիմումատուի և ոստիկանապետի տեղակալի միջև առերեսում չի անցկացվել:

<u>Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով արձանագրվել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետևյալ ընթացակարգային խախտումները</u>.

- հաշվի առնելով այն, որ պետական մարմինները ներգրավվել էին քննելու միևնույն դատախազության աշխատակիցների գործողությունները, նման քննությունը դատարանը գնահատել է անկախության և անկողմնակալության պահանջներին չհամապատասխանող,

- քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը պատճառաբանված չէ: Քննություն իրականացնող մարմինը, առանց որևէ հիմնավորման, նախապատվությունը տվել է ոստիկանների կողմից տրամադրված ցուցմունքներին՝ չնայած, որ բժշկական բնույթի ապացույցները դիմումատուների օգտին էին, և դրանով չի ցուցաբերել անհրաժեշտ օբյեկտիվություն և անկախություն:

- ընդունելով, որ դիմումատուի ոտքերի վրա կապտուկներն առաջացել են այտուցվածությունից՝ փորձ չի արվել պարզելու այտուցվածության պատճառը: Լրացուցիչ բժշկական հետազոտություններ չեն նշանակվել, այս առնչությամբ չեն հարցաքննվել ոչ այդ եզրակացությունները տված բժիշկները, ոչ էլ որևէ այլ բժշկական փորձագետ,

- երրորդ դիմումատուի դեպքում քննություն իրականացնող մարմինը նույնիսկ չի հետազոտել առկա բժշկական բնույթի ապացույցները,

- ո՛չ առաջին դիմումատուն, ո՛չ երրորդը երբևէ չեն հարցաքննվել վատ վերաբերմունքի մասին իրենց պնդումների առնչությամբ, որևէ փորձ չի արվել՝ բացահայտելու և հարցաքննելու որևէ այլ հնարավոր վկայի, իսկ դիմումատուների և ենթադրյալ վատ վերաբերմունք դրսևորած անձանց միջև չի կատարվել առերեսում:

<u>Զայլանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով արձանագրել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետևյալ ընթացակարգային խախտումները</u>.

- դիմումատուների առաջին բժշկական զննությունն իրականացվել է միայն 2004 թվականի հուլիսի 7-ին նրանց «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ ընդունելուց հետո ենթադրյալ վատ վերաբերմունքից ավելի քան երկու ամիս անց, որի պատճառով վնասվածքներ չեն հայտնաբերվել: Դատարանն այս կապակցությամբ կարևորել է այն փաստը, որ մինչև դիմումատուների տեղափոխումը կալանավորված անձանց պահելու վայր, նրանք պահվել են ռազմական ոստիկանության համակարգում գործող՝ ՁՊՎ-ում ավելի քան երկու ամիս, չնայած, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հստակ արգելվում է կալանավորված անձանց ՁՊՎ-ներում երեք օրից ավելի պահելը: Այս պահանջը եվրոպական դատարանը գնահատել է որպես կարևոր երաշխիք ֆիզիկական բռնության դեմ, որին կարող են ենթարկվել ձերբակալված անձինք ՁՊՎ-ներում, քանի որ բոլոր կալանավորված անձինք պետք է անցնեն բժշկական զննություն կալանավորված անձանց պահելու վայր ընդունվելու ժամանակ:

Ճիշտ է, առաջին դիմումատուի բողոքը ներկայացվել է ենթադրյալ վատ վերաբերմունքից մեկ ամիս հետո, այնուամենայնիվ, եվրոպական դատարանն այդ ուշացումը չի համարել այնքան, որ բողոքը փաստի ուժով զրկվի բավարարվելու հեռանկարից: Այս առումով եվրոպական դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ այդ ժամանակահատվածում դիմումատուներն օրենքի խախտմամբ պահվել են ռազմական ոստիկանության ՁՊՎ-ում, որի աշխատակիցները վատ վերաբերմունք ցուցաբերած ենթադրյալ անձինք էին, և զրկված են եղել արտաքին աշխարհի հետ որևէ կապից, որը, հավանաբար, դիմումատուների մոտ առաջացրել է անօգնականության և վախի զգացողություններ և հանդիսացել զսպող գործոն: Հետևաբար, զարմանալի չէ, որ առաջին դիմումատուն իր բողոքը ներկայացրել է իր ընտրած պաշտպանի հետ հանդիպելուց անմիջապես հետո:

- գրեթե ոչ ոք, բացառությամբ երկրորդ դիմումատուի, չի հարցաքննվել,

- ինչ վերաբերում է երկրորդ դիմումատուի հարցաքննություններին, ապա դրանք անցկացվել են ենթադրյալ կատարողներ հանդիսացող երկու քննիչների կողմից և, ամեն դեպքում, վատ վերաբերմունքի մասին մանրամասն շարադրված հարցեր չեն տրվել, հարցաքննությունը կատարվել է բողոքից ավելի քան մեկ ամիս անց,

- քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու վերաբերյալ որոշում չի կայացվել, և վատ վերաբերմունքի մասին հայտարարությունները մերժվել են զինվորական դատախազի գրությամբ՝ գրեթե առանց պատճառաբանության: Մասնավորապես, դրանք մերժելու միակ պատճառաբանությունն այն է եղել, որ դիմումատուները վատ վերաբերմունքի մասին հայտարարություններ չեն արել 2004 թվականի ապրիլի 27-ի դատական նիստի ժամանակ, որի ընթացքում որոշվել է նրանց նկատմամբ նախնական կալանք կիրառելու հարցը:

- վատ վերաբերմունքի մասին դիմումատուների հայտարարությունների առնչությամբ որոշակի քննություն իրականացվել է Սյունիքի մարզի դատարանի ու Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի կողմից՝ դիմումատուների գործով դատաքննության ընթացքում, բայց այն Վճռաբեկ դատարանի կողմից համարվել է ոչ պատշաճ, և դատարանը

բեկանել է դիմումատուների մեղադրական դատավճիռը՝ ներառյալ այն հիմքով, որ անհրաժեշտ է իրականացնել վատ վերաբերմունքի մասին դիմումատուների հայտարարությունների լրացուցիչ քննություն:

- ինչ վերաբերում է այս որոշմանը հաջորդած քննությանը, ապա այն կատարվել է սպանության առթիվ դիմումատուների նկատմամբ հարուցված քրեական գործի շրջանակներում, որում նրանք ներգրավված են եղել որպես մեղադրյալներ: Ենթադրյալ վատ վերաբերմունքի մասով առանձին քրեական գործ չի հարուցվել: Ենթադրյալ կատարողներից ոչ ոք չի ներգրավվել որպես կասկածյալ, և նրանք շարունակել են հանդես գալ որպես վկաներ,

- բացի այդ, քննությունն իրականացվել է զինվորական դատախազության քննիչների կողմից, որի աշխատակիցներն առնչվել են ենթադրյալ վատ վերաբերմունքի դրսևորմանը, և, հետևաբար, կարող էին չբավարարել անկախության և անկողմնակալության պահանջը:

Կոլեգիան արձանագրեց, որ հաշվետու ժամանակահատվածում ենթադրյալ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի առթիվ քննված քրեական գործերով ընդհանուր առմամբ ապահովված են եղել քննության անկախության և անկողմնակալության չափանիշները, քանի որ վատ վերաբերմունքի դեպքերի առթիվ քրեական գործերով նախաքննությունն իրականացվել է անկախ մարմնի՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների կողմից:

Անկախ մարմնի կողմից քննությունն իրականացնելու չափանիշի ապահովման կապակցությամբ Եվրոպայի Խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեն 2015 թվականի հոկտեմբերին Հայաստան կատարած պարբերական այցի արդյունքների վերաբերյալ զեկույցում արձանագրել է, որ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներ կամ քրեակատարողական հիմնարկներ ընդունված անձանց բուժզննությունների արդյունքում գրանցված մարմնական վնասվածքների վերաբերյալ տեղեկությունները շարունակում են փոխանցվել քրեական գործով վարույթն իրականացնող քննիչին, հսկող դատախազին, բայց ոչ Հատուկ քննչական ծառայություն: Հատուկ քննչական ծառայության քննիչները մեխանիկորեն չեն ներգրավվում քննությանը՝ ոստիկանության աշխատակիցների կողմից ենթադրյալ վատ վերաբերմունքի դրսևորման վերաբերյալ բողոքների կամ դրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկության առկայության դեպքում:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով, ՀՀ ոստիկանության համակարգում և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգում գործող ձերբակալված անձանց պահելու վայրերի ներքին կանոնակարգերը հաստատելու մասին ՀՀ կառավարություն որոշումներով սահմանված կարգի համաձայն՝ բուժզննության արդյունքները գրանցվում են ձերբակալվածների բուժզննության կամ բուժօգնության գրանցամատյանում, անձնական գործում և դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին:

ՀՀ դատախազության կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 10-ի որոշման համաձայն՝ ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրեր ընդունելիս կատարված բուժզննության ընթացքում հայտնաբերված մարմնական վնասվածքների վերաբերյալ ստացված իրազեկումներն անհրաժեշտ է դիտել որպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործ հարուցելու առիթ, ուստի՝ դրանց ընթացքը լուծել հիմնական վարույթից առանձնացված նյութերի նախապատրաստման

շրջանակում՝ դրանցից յուրաքանչյուրի դեպքով կայացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը կամ համապատասխան հիմքերի առկայության դեպքում ղեկավարվել ՀՀ դատախազության կոլեգիայի 2008 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ և ՀՀ գլխավոր դատախազի 2008 թվականի ապրիլի 10-ի հանձնարարականով, որոնց համաձայն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության իրավասությանը վերաբերող նյութերը և քրեական գործերը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի կարգով ենթակայության հիմքը պարզելուց անմիջապես հետո, դատախազի ուղեկցական գրությամբ պետք է ուղարկվեն ՀՀ գլխավոր դատախազին, իսկ ուղարկված նյութերին և քրեական գործին վերաբերող մյուս գրագրություններն անհրաժեշտ է անմիջականորեն ուղարկել ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Անկախ մարմնի կողմից քննությունն իրականացնելու չափանիշը խստագույնս պահպանելու անհրաժեշտությամբ պայմանավորված, հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի դիտարկումները, կոլեգիան առաջարկեց վերանայել ՀՀ դատախազության կոլեգիայի վերը նշված որոշումները և ՀՀ գլխավոր դատախազի նշված հանձնարարականը՝ պարտավորեցնելով ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներից և ՀՀ արդարադատության նախարարության ՔԿՀ-ներից այդ հիմնարկներ մարմնական վնասվածքներով անձանց ընդունվելու վերաբերյալ իրազեկումներ ստացած վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ հսկող դատախազներին, իրազեկման ուսումնասիրությամբ պարզելով, որ ձերբակալված կամ կալանավորված անձը վնասվածքներն ստանալու հանգամանքների շուրջ հայտարարել է այդպիսիք խոշտանգման արդյունքում պատճառվելու մասին, անհապաղ իրազեկումն ուղարկել ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ առանց դրա առթիվ նյութեր նախապատրաստելու:

Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում պահպանվել են նաև խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի քննության անհապաղության, ամբողջականության և քննության մարմնի իրավասության չափանիշները: Քննության ամբողջականության չափանիշի խախտման դեպքերում կիրառվել են դատախազական ներգործության միջոցներ՝ նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների կողմից տրվել են համապատասխան ցուցումներ՝ ապահովելու համար գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը:

Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում 9 քրեական գործով նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացրած դատախազների կողմից տրվել են համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու մասին գրավոր ցուցումներ:

Միևնույն ժամանակ, կոլեգիան արձանագրեց, որ առերևույթ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում քննված որևէ քրեական գործով չի քննարկվել տուժողին դատահոգեբանական փորձաքննության ենթարկելու հարցը՝ պարզելու համար հոգեկան տառապանք պատճառելու եղանակով տուժողին խոշտանգելու հնարավորության հանգամանքը: Մինչդեռ, ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի վարչության կողմից մշակված, Ստամբուլյան արձանագրությամբ հաստատված՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի ձևերի արդյունավետ քննության և փաստագրման մասին ձեռնարկով ներկայացված առաջարկները որպես խոշտանգումների մասին

ապացույցների հավաքման եղանակ ներառում են անհրաժեշտության դեպքում տուժողի դատահոգեբանական փորձաքննության կատարումը:

Որոշակի թերացումներ են արձանագրվել տուժողի ներգրավվածության չափանիշի ապահովման հարցում:

Միաժամանակ, հաշվետու ժամանակահատվածում ենթադրյալ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի առթիվ քննված քրեական գործերով նախաքննության օրինականության վիճակի ուսումնասիրությամբ կոլեգիան արձանագրեց, որ ընդհանուր առմամբ ապահովված է եղել խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի մասին բողոքների և հաղորդումների արագ ու արդյունավետ քննությունը: Խոշտանգման ենթադրյալ ցանկացած դեպքի առթիվ քննություն է կատարվել՝ անկախ այն հանգամանքից, թե քրեական գործ հարուցելու առիթ է հանդիսացել ֆիզիկական անձի հաղորդումը, թե՞ ցանկացած այլ տեսակի օրինական առիթ:

Բացի այդ, հաշվետու ժամանակահատվածում ենթադրյալ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի առթիվ քննված քրեական գործերով նախաքննությունն իրականացրած՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչները համապատասխանել են ձեռնհասության և անաչառության պահանջներին:

Ենթադրյալ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի առթիվ նախաքննություն իրականացնելիս, ինչպես և ցանկացած քրեական գործով, նախաքննության մարմինը լիազորված է ներգրավելու անաչառ բժշկական կամ այլ փորձագետների: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 249-րդ հոդվածի ուժով քննիչը լիազորված է փորձաքննության կատարումը կազմակերպել փորձագիտական հիմնարկից դուրս, թեև հաշվետու ժամանակահատվածում նման պրակտիկա չի կիրառվել:

Քննություն իրականացնող՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչներն ունեն քննության համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները ստանալու լիազորություն և պարտավորություն: Նրանք լիազորված են՝ պարտավորեցնելու խոշտանգումներին կամ այլ դաժան վերաբերմունքին ենթադրաբար առնչություն ունեցած պաշտոնյաներին՝ ներկայանալու ցուցմունքներ տալու համար:

Կոլեգիան արձանագրեց նաև, որ որևէ գործով ենթադրյալ տուժողների, վկաների և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց նկատմամբ պաշտպանության որևէ միջոց չի կիրառվել՝ դրա անհրաժեշտությունը չլինելու պատճառով:

Ինչ վերաբերում է խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի կիրառման մեջ կասկածվող անձանց իրենց զբաղեցրած պաշտոններից ազատելու պահանջին, ապա դրան համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով նախատեսված՝ դատավարական հարկադրանքի այլ միջոց հանդիսացող պաշտոնավարման ժամանակավոր դադարեցումը:

Այդպիսի միջոցի կիրառման անհրաժեշտությանն անդրադարձել է նաև ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներում:

Հաշվետու ժամանակահատվածում ենթադրյալ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի առթիվ քննված քրեական գործերով նման հարկադրանքի միջոց կիրառվել է 1 անձի նկատմամբ:

Խիստ կարևորելով այն սկզբունքը, որ փորձաքննությունը պետք է անցկացվի փակ դռների հետևում, բժշկական փորձագետի վերահսկողությամբ և իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց բացակայությամբ, միևնույն ժամանակ պետք է փաստել, որ դատախազական հսկողության միջոցները թույլ չեն տալիս կանխելու կամ ի հայտ բերելու այնպիսի դեպքեր, երբ փորձաքննվողի հետազոտումն իրականացվել է իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց ներկայությամբ: Ուստի, կոլեգիան նշեց, որ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել պահանջ առ այն, որ ենթադրաբար խոշտանգումից տուժած անձի մարմնի դատաբժշկական հետազոտումն իրականացվի քննության մարմնի և իրավապահ մարմինների աշխատակիցների տեսողական և լսողական վերահսկողությունը բացառող պայմաններում:

Հատկանշական է, որ այդ հանգամանքին անդրադարձել է ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում՝ նշելով, որ մասնակից պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի՝ երաշխավորելու համար կալանավորված անձանց՝ անմիջապես կալանավորման սկզբից խոշտանգման դեմ առկա իրավական բոլոր հիմնարար երաշխիքներից օգտվելու հնարավորությունը՝ որոնք, ի թիվս այլոց, ներառում են նաև անկախ բժշկի կողմից բժշկական հետազոտության ենթարկվելու իրավունք, որը պետք է իրականացվի ոստիկանության աշխատակիցների լսելու և, եթե բժիշկը ակնհայտորեն չի առարկում, տեսնելու հնարավորությունից դուրս:

Կոլեգիան արձանագրեց, որ մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի համեմատ վարույթը կարճված քրեական գործերի բարձր ցուցանիշը պայմանավորված է այդօրինակ գործերով ապացուցման բարդությամբ և առանձնահատկություններով, ինչպես նաև խոշտանգումների վերաբերյալ ստացված հաղորդումների՝ ՄԻԵԴ-ի կողմից մշակված վստահելիության չափանիշին չհամապատասխանելու հանգամանքով, մասնավորապես, երբ հանցագործության մասին հաղորդում տված անձի հայտնած հանգամանքներն իրենց հաստատումը չեն ստանում քննությամբ ձեռք բերված այլ ապացույցներով, օրինակ, դիմողի մոտ բացակայում են մարմնական վնասվածքները, կամ դրանց առկայության պայմաններում հնարավոր չի լինում ապացույցների բավարար համակցությամբ հաստատված համարել, որ դրանք առաջացել են բռնության հետևանքով, և ոչ թե այլ հանգամանքներում, օրինակ՝ բերման ենթարկելիս ոստիկանների օրինական պահանջներին չենթարկվելու պատճառով ֆիզիկական ուժի գործադրման արդյունքում կամ ենթադրյալ խոշտանգմանը նախորդած իրադարձությունների ժամանակ և այլ հանգամանքներում:

Վարույթները կարճված քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ խոշտանգումների դեպքերի ապացուցման կամ դրանց լիարժեք հերքման բարդությունը շատ դեպքերում պայմանավորված է այն հանգամանքով, որ գործնականում հազվադեպ է տեսաձայնագրվում կասկածյալների և մեղադրյալների հարցաքննությունը, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կատարվող քննչական այլ գործողությունները, այդ թվում՝ առերեսումը, ճանաչման ներկայացնելը, քննումը, քննչական փորձարարությունը, հետազոտման համար նմուշներ ստանալը:

Նկատի ունենալով, որ խոշտանգումների մասին հաղորդումների հիմնական մասը վերաբերում է խոշտանգման կիրառմամբ խոստովանական ցուցմունքներ կորզելուն, ուստի կասկածյալների և մեղադրյալների (հատկապես, անազատության մեջ գտնվող)

հարցաքննությունների տեսաձայնագրումը հնարավորություն կտա իրական պատկերացում կազմելու, թե խոստովանական ցուցմունք տվող անձը ցուցմունքը տվել է իր կամքո՞վ, թե՞ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ազդեցության տակ, ինչպես նաև պարզելու այդ պահին հարցաքննվող անձի դեմքի և մարմնի տեսանելի այլ մասերի վրա հնարավոր խոշտանգման հետքերի առկայության հանգամանքը: Կասկածյալների և մեղադրյալների հարցաքննությունների այդօրինակ ամրագրումը հնարավորություն կտա նաև հստակ պարզելու այն հաղորդումների հավաստիությունը, որոնցով կասկածյալները և մեղադրյալները հայտնում են ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց խոշտանգելու մասին քննիչին հարցաքննության ժամանակ հայտնելու, սակայն վերջինիս կողմից այդ հանգամանքը չարձանագրելու վերաբերյալ:

Հատկանշական է, որ Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն, վերահաստատելով իր նախորդ հանձնարարականը, նշել է, որ. «Մասնակից պետությունը պետք է նախաձեռնի օրենսդրական ու այլ անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովելու համար քրեական գործերով բոլոր հարցաքննությունների պարտադիր տեսաձայնագրումը, և զինի ոստիկանական բաժանմունքներում ու անազատության մեջ պահելու համար նախատեսված այլ վայրերում հարցաքննության համար նախատեսված բոլոր սենյակները տեսաձայնագրման սարքերով: Մասնակից պետությունը պետք է նաև ապահովի, որ տեսաձայնագրությունները պահպանվեն այնքան ժամանակ, որ հնարավոր լինի դրանք օգտագործել որպես ապացույց (ներառյալ դատարանում), և որ տեսագրությունները վերահսկվեն խոշտանգումներն ու չափանիշների մյուս խախտումները բացահայտելու ու հետաքննելու նպատակով, և որ այդ տեսագրությունները հասանելի լինեն ամբաստանյալներին ու նրանց փաստաբաններին»:

Հաշվի առնելով վերոգրյալը, կոլեգիան արձանագրեց, որ նպատակահարմար է օրենսդրորեն ամրագրել, որ ազատությունից զրկված անձի, կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կամ մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունների ընթացքը ենթակա է պարտադիր տեսաձայնագրման: Միևնույն ժամանակ, մինչև օրենսդրական մակարդակով հարցի լուծումը անհրաժեշտ է նախաքննության մարմինների ղեկավարների ուշադրությունը հրավիրելու այն հանգամանքի վրա, որ քննչական պրակտիկայում կասկածյալների և մեղադրյալների (հատկապես, անազատության մեջ գտնվող) հարցաքննությունը, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կատարվող այլ քննչական գործողությունները, այդ թվում՝ առերեսումը, ճանաչման ներկայացնելը, քննումը, քննչական փորձարարությունը, հետազոտման համար նմուշներ ստանալը, որպես կանոն տեսաձայնագրվի:

Բացի այդ, խոշտանգումների և վատ վերաբերմունքի մասին հաղորդումների մի մասի ստուգմամբ պարզվել է, որ դրանք տրվել են ենթադրյալ խոշտանգման դեպքից տևական ժամանակ անց, երբ մինչև նման հաղորդում ներկայացնելն անձինք ունեցել են իրական հնարավորություն՝ հայտնելու այդ մասին, որպիսի իրավիճակ տեղ էր գտել Նինա Վարդանյանի՝ տեղեկանքում վկայակոչված գործով:

Մի շարք դեպքերում այլ քրեական գործերով քննության ընթացքում կասկածյալները և մեղադրյալները հաղորդումներ են տվել ոստիկանների կամ քննության մարմինների կողմից խոշտանգման ենթարկվելու արդյունքում խոստովանական ցուցմունքներ տալու մասին՝ նպատակ ունենալով խուսափել քրեական պատասխանատվությունից:

Առանձին դեպքերում քրեական գործ հարուցելու առիթ է հանդիսացել ոչ թե ենթադրաբար խոշտանգման ենթարկված անձի հաղորդումը, այլ տարբեր իրավապաշտպան կամ այլ հասարակական կազմակերպությունների հաղորդումները, որոնց իսկությունը երբեմն հերքվել է հենց այն անձանց կողմից, ում խոշտանգելու վերաբերյալ ներկայացվել է հաղորդումը, և քննության ընթացքում չեն հայտնաբերվել խոշտանգման փաստի մասին վկայող օբյեկտիվ այլ տվյալներ: Մասնավորապես, կալանավորված անձի անձնական գործում չկան քրեակատարողական հիմնարկ ընդունելիս մարմնական վնասվածքներ հայտնաբերելու մասին նշումներ, դատաբժշկական փորձաքննությամբ անձի մոտ չեն հայտնաբերվել մարմնական վնասվածքներ, դեպքի վայրի զննությամբ չեն հայտնաբերվել խոշտանգման հանգամանքների մասին վկայող հետքեր կամ առարկաներ:

Ելնելով վերոգրյալից.

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչությանը /Գ.Պողոսյան/, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին՝

Ձերբակալված անձանց պահելու վայրերում պահվող անձանց նկատմամբ հնարավոր վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման նպատակով ապահովել, որպեսզի խստագույնս պահպանվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջն այն մասին, որ կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ, օրենքի պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով:

2. ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչությանը /Վ.Մուրադյան/ և ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներին՝

1) Խոշտանգման ենթադրյալ հանցագործությունների դեպքերի առթիվ քրեական գործերով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս ապահովել, որպեսզի՝

- քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ կամ դրանից անմիջապես հետո ենթադրյալ խոշտանգման ենթարկված անձինք ճանաչվեն տուժող և մանրակրկիտ հարցաքննվեն վատ վերաբերմունքի մասին իրենց պնդումների առնչությամբ,

- քրեական գործ հարուցելուց անմիջապես հետո անհապաղ և մանրակրկիտ հարցաքննվեն ենթադրաբար խոշտանգում իրականացրած անձինք՝ բացառելու համար նրանց կողմից ցուցմունքները համապատասխանեցնելու հնարավորությունը,

- պարզվեն հնարավոր բոլոր վկաները և մանրակրկիտ հարցաքննվեն ենթադրաբար տեղի ունեցած խոշտանգման հանգամանքների շուրջ,

- ենթադրաբար խոշտանգում իրականացրած պաշտոնատար անձանց կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ տալուց անմիջապես հետո, ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածին համապատասխան, ժամանակավորապես դադարեցվի նրանց պաշտոնավարությունը,

- անհրաժեշտության դեպքում տուժողի, ինչպես նաև դատավարությանը մասնակցող այլ անձանց նկատմամբ կիրառվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 981-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցներ,

- անհապաղ նշանակվի տուժողի դատաբժշկական փորձաքննություն և կատարվի դեպքի վայրի զննություն՝ այդպիսի զննությունների կատարմանը, որպես կանոն, ներգրավելով քրեագետ-մասնագետների՝ վերջիններիս կողմից քրեագիտական տեխնիկայի կիրառմամբ ապահովելու համար ենթադրյալ խոշտանգման փաստի մասին վկայող հետքերի ու իրեղեն ապացույցների, այդ թվում՝ արյան, սպերմայի, մազերի և մանրաթելերի հայտնաբերումը,

- տուժողի դատաբժշկական փորձաքննությամբ պարտադիր պարզվի վնասվածքի առաջացման մեխանիզմը,

- խստագույնս պահպանվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով երաշխավորված՝ տուժողի, ինչպես նաև կասկածյալի և մեղադրյալի իրավունքը՝ քննիչի կողմից փորձագետի եզրակացությունն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում ծանոթանալու փորձագետի եզրակացությանը,

- տուժողի և ենթադրյալ խոշտանգում իրականացրած անձանց ցուցմունքների միջև էական հակասությունների դեպքում պարտադիր և անհապաղ կատարվեն առերեսումներ,

- պատշաճ հավաքվեն, հետազոտվեն և գնահատվեն տուժողի վերաբերյալ բժշկական փաստաթղթերը, ինչպես նաև հարցաքննվեն այդ փաստաթղթերը կազմած անձինք,

- ենթադրյալ վատ վերաբերմունքի մասին հաղորդումը դեպքից հետո ուշացումով ներկայացված լինելու դեպքերում մանրակրկիտ ստուգվեն ուշացման պատճառները, մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, թե արդյո՞ք դա պայմանավորված չի եղել արգելանքի տակ գտնվելու հետևանքով հնարավոր անօգնականության և վախի զգացողություններով,

- խոշտանգման դեպքի առթիվ քննված քրեական գործով արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործով վարույթը կարճելու և/կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներում մանրամասն գնահատական տրվի վատ վերաբերմունքի մասին հաղորդած անձանց հայտնած բոլոր հանգամանքներին:

2) Խոշտանգումների վերաբերյալ քրեական գործերի քննության ընթացքում պարտադիր կատարել ենթադրաբար խոշտանգման ենթարկված քաղաքացու ընդունելություն, իսկ վերջինիս անազատության մեջ գտնվելու դեպքում՝ կազմակերպել այցելություն արգելանքի տակ պահելու վայր:

3) Խոշտանգումների վերաբերյալ քննված քրեական գործերով վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բողոքներ ստանալու բոլոր դեպքերում, մինչև բողոքի վերաբերյալ որոշում կայացնելը, վերադաս դատախազի (ՀՀ գլխավոր դատախազի կամ ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի) մոտ՝ հսկող դատախազի մասնակցությամբ, նախաձեռնել բողոքաբերի ընդունելություն՝ փաստաբանի մասնակցությամբ:

4) Խոշտանգումների վերաբերյալ սուտ տեղեկություններ հայտնելու միջոցով իրավունքի չարաշահման դեպքերը նվազեցնելու համար խստացնել խոշտանգումների մասին սուտ մատնություն կատարած անձանց պատժողական քաղաքականությունը:

3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ.Ասլանյանին, ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչությանը /Վ.Մուրադյան/՝

Մեկանսյա ժամկետում ՀՀ արդարադատության, առողջապահության նախարարությունների և ՀՀ ոստիկանության ներկայացուցիչների հետ քննարկել այնպիսի ընթացակարգ ներդնելու հնարավորությունը, որի պայմաններում ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրեր, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ մարմնական վնասվածքներով անձանց ընդունելիս հերթապահի կողմից անհապաղ շտապ բուժօգնության ահազանգ կատարվի, այդպիսի ահազանգերի դեպքերում շտապ բուժօգնության բրիգադի կազմում մեկնի մասնագիտացված բրիգադ, որի կազմում ընդգրկված մասնագիտացված բժիշկը ձերբակալված կամ կալանավորված անձի մարմնի բժշկական զննման արդյունքներն արձանագրի Ստամբուլյան արձանագրությամբ սահմանված նմուշի բժշկական զննման ձևաթղթում:

4. ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչությանը /Վ.Մուրադյան/՝

1) Ամփոփման արդյունքներով կազմել և ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի ստորագրմանը ներկայացնել ՀՀ ոստիկանության պետին, ՀՀ արդարադատության նախարարին, ինչպես նաև դատաբժշկական փորձաքննություններ կատարող հիմնարկների ղեկավարներին ուղղված հաղորդումների նախագծեր՝ ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և փորձագիտական հիմնարկներում բժշկական զննության հատուկ սենյակներ առանձնացնելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ, որոնք կահավորված կլինեն միակողմանի տեսանելիություն ապահովող ապակիներով և հնարավորություն կտան իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից, լսողական վերահսկողությունը բացառող պայմաններում զննում իրականացնող բժշկի չառարկելու դեպքում, իրականացնելու միայն զննման գործընթացի տեսողական դիտարկում՝ բժշկի անվտանգությունն ապահովելու նպատակով:

2) Ամփոփման արդյունքներով կազմել և ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի ստորագրմանը ներկայացնել ՀՀ նախաքննական մարմինների ղեկավարներին ուղղված հաղորդման նախագիծ՝ առաջարկելով համապատասխան միջոցներ ձեռնարկել /օրինակ՝ տալ հանձնարարականներ, հրամաններ ցուցումներ/, որպեսզի քննչական պրակտիկայում կասկածյալների և մեղադրյալների (հատկապես անազատության մեջ գտնվող) հարցաքննությունը, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կատարվող այլ քննչական գործողությունները, այդ թվում՝ առերեսումը, ճանաչման ներկայացնելը, անձնական խուզարկությունը, քննումը, քննչական փորձարարությունը, հետազոտման համար նմուշներ ստանալը, տեսագրվեն բոլոր այն դեպքերում, երբ կասկածյալը կամ մեղադրյալը չունի պաշտպան և քննչական գործողության ընթացքում տեսագրում կիրառելու հնարավորության մասին պարզաբանում ստանալուց հետո նման ցանկություն է հայտնում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ քննումը զուգորդվում է անձին մերկացնելու, իսկ հետազոտման համար նմուշներ ստանալը կապված է անձի մարմնի ինտիմ մասերից այդպիսիք ստանալու հետ:

3) Խոշտանգումների փաստերով իրականացվող նախաքննության, հետաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու, նեղ մասնագիտացում ապահովելու նպատակով, ներկայացնել հատկապես կարևոր գործերով քննության վարչության երեք դատախազի թեկնածություն, որոնք ՀՀ գլխավոր դատախազի

հրամանով կլիազորվեն հսկողություն իրականացնել խոշտանգումների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության օրինականության նկատմամբ:

5. ՀՀ գլխավոր դատախազության վարչություններին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, կայազորների զինվորական դատախազներին՝

Անկախ մարմնի կողմից քննությունն իրականացնելու չափանիշը խստագույնս պահպանելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ապահովել ձերբակալված կամ կալանավորված անձանց մոտ մարմնական վնասվածքներ հայտնաբերելու վերաբերյալ իրազեկումների հիման վրա նախապատրաստված նյութերն անհապաղ ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու հետևյալ ուղենիշները՝

- երբ վարույթն իրականացնող մարմինը, այդ թվում՝ հսկող դատախազը, մարմնական վնասվածքների վերաբերյալ իրազեկման ուսումնասիրությամբ պարզում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձը վնասվածքներն ստանալու հանգամանքների շուրջ հայտարարել է այդպիսիք խոշտանգման արդյունքում պատճառվելու մասին, անհապաղ նշանակել դատաբժշկական փորձաքննություն և անմիջապես նախապատրաստված նյութերը ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ուղեկցական գրությամբ ուղարկել ՀՀ գլխավոր դատախազին՝ ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու հարցը քննարկելու համար,

- երբ իրազեկման առթիվ նյութեր նախապատրաստելու ընթացքում պարզվում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձի մարմնական վնասվածքներն ակնհայտ չեն համապատասխանում այն դեպքի հանգամանքներին, որի առթիվ քննվող քրեական գործով անձը ձերբակալվել կամ կալանավորվել է, իսկ վերջինս վնասվածքների առաջացման հանգամանքների վերաբերյալ բերում է անարժանահավատ և անհեթեթ պատճառաբանություններ, նախապատրաստված նյութերը նույն ընթացակարգով՝ ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ուղեկցական գրությամբ ուղարկել ՀՀ գլխավոր դատախազին՝ ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու հարցը քննարկելու միջնորդությամբ:

6. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանը /Ա. Մարուխյան/՝

1) Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության դեմ վճիռ կայացնելու յուրաքանչյուր դեպքում անցկացնել ծառայողական ուսումնասիրություն և բացթողում թույլ տված դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության դեպքում զեկուցագիր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

2) Խոշտանգումների վերաբերյալ քրեական գործերի քննության ընթացքում ապացույցներ հավաքելու և ամրագրելու՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների ունակությունները բարձրացնելու և այդ բնույթի քրեական գործերով նախաքննության նկատմամբ պատշաճ դատավարական ղեկավարում ապահովելու համար առաջարկել ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտորին՝ ակադեմիայի ուսումնական ծրագրերում ներառել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների և խոշտանգումների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող

դատախազների վերապատրաստման դասընթացներ՝ խոշտանգումների կանխարգելման, արձանագրման և արդյունավետ բացահայտման վերաբերյալ Ստամբուլի արձանագրության չափանիշներին համապատասխան:

3) կազմել և ՀՀ դատախազության համակարգի դատախազություններին, նախաքննական մարմիններին և ոստիկանություն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության կողմից կազմված՝ 2014-2015 թվականների ընթացքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերի առթիվ քննված քրեական գործերով նախաքննության վիճակի վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքները:

7. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝

1) Իրավակիրառ պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված՝ իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ փաստաբանին հայտնի դարձած հանգամանքների շուրջ վերջինիս որպես վկա հարցաքննելու օրենսդրական արգելքի մեկնաբանությունը չտարածել այն դեպքերի վրա, երբ փաստաբանին իր մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում հայտնի են դառնում խոշտանգման կամ ցանկացած այլ հանցագործության հանգամանքների մասին տեղեկություններ:

2) Խոշտանգումների վերաբերյալ հաղորդումների հիման վրա քրեական գործ հարուցելու մասին հարցը լուծելիս արարքը որպես խոշտանգում որակել և ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով քրեական գործ հարուցել բոլոր այն դեպքերում, երբ ձեռք բերված փաստական տվյալները կվկայեն առնվազն ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի դիսպոզիցիայով նկարագրված նպատակներով կամ դրանցից որևէ մեկով պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ցավ կամ հոգեկան տառապանք պատճառելու վերաբերյալ՝ անկախ այն հանգամանքից, թե քննության այդ փուլում ձեռք բերված տվյալները բավարար կլինե՞ն գնահատելու, որ պատճառվել է ուժեղ ֆիզիկական ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք:

3) Բոլոր այն դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով քրեական գործ կհարուցվի ոչ թե պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձի, այլ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ խոշտանգում կատարելու ենթադրաբար դեպքի առթիվ, քրեական գործ հարուցելուց անմիջապես հետո քրեական գործն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված կարգով քրեական գործը ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնելու հարցը քննարկելու համար:

8. **ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչությանը /Վ.Մուրադյան/ և ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանը /Ա. Մարուխյան/՝**

նախապատրաստել միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու մասին ՀՀ վարչապետի հրամանի նախագիծ, որը պարբերաբար կզբաղվի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարման մասին Հայաստանի Հանրապետության հերթական պարբերական զեկույցի պատրաստման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքմամբ և վերլուծությամբ:

9. Ուժը կորցրած ճանաչել.

1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի ապրիլի 10-ի թիվ 20/4-116-08 հանձնարարականը,

2) Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2008 թվականի փետրվարի 8-ի նիստի որոշման (Արձանագրություն N 2) 1-ին կետի 3-րդ ենթակետը,

3) Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 10-ի նիստի որոշման (Արձանագրություն N 4) 1-ին կետը:

2. 2016 թվականի ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման ու քննչական վարչություններում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի՝ առերևույթ հատկանիշներ պարունակող հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով հարուցված քրեական գործերի նախաքննության և մեղադրանքի պաշտպանության վիճակի քննարկումը (Հիմք՝ ՀՀ գլխավոր դատախազության 2017 թվականի 1-ին կիսամյակի աշխատանքի ծրագրի 1-ին կետ):

Զեկուցող՝

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Տ.Ամբարյան

Արտահայտվեցին Հ.Ասլանյանը, Դ.Մելքոնյանը, Գ.Բաղդասարյանը, Վ.Ռաֆայելյանը, Ա.Աֆանդյանը, Դ.Վեքիլյանը, Ս.Մնացականյանը, Ա.Սաքապետոյանը, Ս.Սինանյանը և Ա.Վարդանյանը:

Լսելով և քննարկելով 2016 թվականի ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման ու քննչական վարչություններում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի՝ առերևույթ հատկանիշներ պարունակող հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով հարուցված քրեական գործերի նախաքննության և մեղադրանքի պաշտպանության վիճակի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Տ. Ամբարյանի զեկույցը՝ ՀՀ դատախազության կոլեգիան նշում է, որ Հայաստանի Հանրապետության հետաքննության և նախաքննության մարմինների կողմից 2016 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների դեպքերի առթիվ նախապատրաստվել է 419 նյութ, որից 338-ը (80.7%)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման և քննչական վարչություններում: 2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում նույն հոդվածով նախատեսված հանցագործությունների դեպքերի առթիվ նախապատրաստվել է 626 նյութ, որից 592 (94.5%)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից:

Վիճակագրական տվյալների համադրումը վկայում է, որ 2016 թվականին նախապատրաստված նյութերի թվի 207-ով նվազում արձանագրվելու պայմաններում 116-ով աճել է քրեական գործերի հարուցման թիվը, 2015 թվականին՝ 100, 2016 թվականին՝ 216, որից 205-ը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման և քննչական վարչություններում:

Զեկուցողը ներկայացրեց նաև 2016 թվականի և 2017 թվականի առաջին 5 ամսվա վիճակագրական տվյալների համադրությունը:

2016 թվական փոխանցվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով հարուցված 148 քրեական գործ և 2016 թվականի առաջին 5 ամիսների ընթացքում հարուցվել է 49 քրեական գործ, այսինքն վարույթում քննվել է 197 քրեական գործ:

2017 թվական է փոխանցվել 171 քրեական գործ և նույն թվականի առաջին 5 ամսվա ընթացքում հարուցվել 91 քրեական գործ: Հաշվետու ժամանակաշրջանում ընդհանուր քննվել է 262 քրեական գործ: Այսինքն՝ 2017 թվականի առաջին 5 ամսվա ընթացքում քրեական գործերի հարուցման թիվը աճել է 65-ով (33%):

2017 թվականի առաջին 5 ամսվա ընթացքում կարճվել է 93 քրեական գործի վարույթ (74-ը՝ արդարացման, 19-ը՝ ոչ արդարացման հիմքով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 31-ի դիմաց (28-ը՝ արդարացման, 3-ը՝ ոչ արդարացման հիմքով):

2017 թվականի առաջին 5 ամսվա ընթացքում ՊԵԿ քննչական վարչության վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով քննված քրեական գործերից 12-ի վարույթը կասեցվել է՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2-ի դիմաց:

2016 և 2017 թվականների առաջին 5 ամիսների ընթացքում դատարան է ուղարկվել 1-ական քրեական գործ:

Այսինքն, 2017 թվականի առաջին 5 ամսում 62-ով (200%) աճել են վարույթը կարճված, 10-ով (500%)՝ վարույթը կասեցված քրեական գործերը:

2016 թվականի ընթացքում դատարան ուղարկված 4 գործով 2 անձ դատապարտվել է ազատազրկման, իսկ 2 գործով 2 անձի վերաբերյալ կայացվել են արդարացման դատավճիռներ:

Կոլեգիան արձանագրեց, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով քննվող քրեական գործերը, որպես կանոն, քննվել են 6 ամիս և ավելի ժամանակով, ինչի պատճառներ հանդիսացել են քննիչների ծանրաբեռնվածությունը, նշանակված փորձաքննությունները, ստուգումներն ու վերստուգումները տևական ժամկետներով կատարելը: Նմանօրինակ դեպքերը բացառելու, քրեական գործերի նախաքննությունը ողջամիտ ժամկետներում իրականացնելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազի ոլորտը համակարգող տեղակալի կողմից դատավարական ղեկավարում իրականացնող դատախազներին հանձնարարվել է խիստ հսկողություն սահմանել քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման ժամկետների պահպանման նկատմամբ, պարտադիր ծանոթանալ քրեական գործի նյութերին, նախաքննության ժամկետը 2-րդ անգամ երկարացնելու դեպքում վարույթն իրականացնող քննիչին տալ ցուցում, ինչպես նաև փորձաքննությունների կամ ստուգումների իրականացման պատճառով ժամկետներ երկարացնելու դեպքում համապատասխան հիշեցումներ ուղարկել փորձագիտական հիմնարկի կամ ստուգում իրականացնող մարմնի ղեկավարին: Ձեռնարկված միջոցառումները գործնականում տվել են իրենց դրական արդյունքը:

Կոլեգիան արձանագրեց նաև, որ նախապատրաստվող նյութերի և ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում հարուցված քրեական գործերի ուսումնասիրմամբ պարզվել է, որ իրավակիրառ պրակտիկայում առկա է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի միատեսակ կիրառության խնդիր, մասնավորապես՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի անգամ անձի սեփականություն կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում համարվել է նաև այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի անգամ նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը չի կատարվել տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Նմանօրինակ դեպքերը քննարկվել և լուծվել են ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումներին համապատասխան: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը ամրագրել է, որ. «Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության համաձայն՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի գույքի որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի անգամ նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրացուցային տարին ներառում է հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը: Այսինքն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով երկրորդ և հաջորդող գործարքներն ապրանքի մատակարարում համարվելու համար անհրաժեշտ է, որպեսզի նույն տեսակի թե՛ առաջին, թե՛ երկրորդ և հաջորդող գործարքներն իրականացված լինեն նույն թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ օրենսդրի կողմից որդեգրած մոտեցման համաձայն՝ ապրանքի մատակարարում համարվում են մեկ օրացուցային տարվա ընթացքում նույն տեսակի գույքի օտարման երկրորդ և հետագա գործարքները, եթե օտարվող գույքը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը քննարկել է հետևյալ հնարավոր իրավիճակները, մասնավորապես՝ եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մեկ օրացուցային տարվա ընթացքում իրականացրել է նույն տեսակի գույքի օտարման երկու գործարք, որոնցից առաջինով օտարել է այն գույքը, որը ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարուց ավելի վաղ, իսկ երկրորդ գործարքով օտարել է այն գույքը, որը ձեռք է բերել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, ապա, ըստ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի վերը նշված կարգավորման, օտարման երկրորդ գործարքը դիտարկվում է որպես ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք:

Այն դեպքում, սակայն, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մեկ օրացուցային տարվա ընթացքում առաջին գործարքով օտարում է այն գույքը, որը ձեռք է բերել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, իսկ երկրորդ գործարքով՝ այն գույքը, որը ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարուց ավելի վաղ, ապա, օրենսդրի որդեգրած մոտեցման համաձայն, այս իրավիճակում երկրորդ գործարքը չի կարող դիտարկվել որպես ապրանքի մատակարարում: Ընդ որում, նման պայմաններում առաջին գործարքը նույնպես չի կարող դիտարկվել որպես ապրանքի մատակարարում, քանի որ, քննարկվող իրավակարգավորման համաձայն, ապրանքի մատակարարում է դիտվում երկրորդ և ավելի անգամ նույն տեսակի գույքի օտարումը:

Առաջնորդվելով նույն տրամաբանությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ միայն այն փաստը, որ մեկ օրացուցային տարվա ընթացքում նույն տեսակի գույքի օտարման երկրորդ գործարքը համարվել է ապրանքի մատակարարում, ինքնին բավարար չէ, որպեսզի նույն օրացուցային տարում նույն տեսակի երրորդ գույքի օտարման գործարքը ևս դիտարկվի որպես ապրանքի մատակարարում: Մեկ օրացուցային տարվա ընթացքում նույն տեսակի գույքի օտարման երրորդ գործարքը ևս ապրանքի մատակարարում համարելու համար անհրաժեշտ է, որ այդ գործարքով օտարվող գույքը ձեռք բերված լինի օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությամբ նախատեսված գույքի օտարման երկրորդ կամ հաջորդող գործարքն ապրանքի մատակարարում համարելու տեսանկյունից էական է, որ տվյալ գործարքով մեկ օրացուցային տարում երկրորդ կամ հաջորդող անգամ օտարվի այնպիսի գույք, որը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, իսկ նույն

օրացուցային տարվա ընթացքում առաջին գործարքով օտարված գույքը ֆիզիկական անձի կողմից ձեռք բերելու ժամանակահատվածը որևէ նշանակություն չունի նույն օրացուցային տարվա ընթացքում հետագայում նույն տեսակի գույքն օտարելու գործարքն ապրանքի մատակարարում որակելու համար: Այլ կերպ ասած՝ գործարքն ապրանքի մատակարարում համարելու համար էական է ոչ թե դրան նախորդող գործարքներով օտարված նույն տեսակի գույքի ձեռքբերման, այլ հենց տվյալ գործարքով օտարվող գույքի ձեռքբերման ժամանակահատվածը:

Նշվածի վերաբերյալ կոլեգիան փաստեց, որ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի անգամ անձի սեփականություն կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի գույքի որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման արդյունքում հարկերը չվճարելու դեպքերի վերաբերյալ քննվող քրեական գործերով անձանց արարքներին իրավաբանական գնահատական տալիս առաջնորդվել ՎԴ/0811/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 26-ին որոշմամբ ձևավորված վերը նշված իրավական դիրքորոշումներով:

Ֆիզիկական անձանց կողմից անշարժ գույքի օտարումների արդյունքում հարկերը չվճարելու դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի քննության առանձնահատկություններից է նաև այն, որ հարկային մարմինների կողմից հարկային պարտավորությունների չափի վերաբերյալ նախնական հաշվարկ կազմելուց և ֆիզիկական անձանց ծանուցելուց հետո, եթե վերջիններս համաձայնում են հաշվարկին և ԱԱՀ-ի հաշվետվություն են ներկայացնում հարկային մարմնին, ապա անկախ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը չվճարելու հանգամանքից, ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով անձի նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվում կամ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվում է՝ հանցակազմի բացակայության հիմքով, քանի որ ներկայացվում են օրենքով սահմանված հաշվարկ-հաշվետվությունները:

Վերոնշյալի կապակցությամբ կոլեգիան փաստեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ պատկան մարմինների ներկայացուցիչների հետ անհրաժեշտ է կազմակերպել քննարկումներ հարկային մարմինների կողմից ֆիզիկական անձանց հարկային պարտավորությունների չափի վերաբերյալ նախնական հաշվարկ կազմելուց և նրանց ծանուցելուց հետո վերջիններիս կողմից հաշվետվություններ ներկայացնելը բացառելու օրենսդրական կառուցակարգեր սահմանելու վերաբերյալ նախաձեռնությամբ հանդես գալու մասին:

Միաժամանակ, կոլեգիան արձանագրեց, որ խնդրահարույց է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածով սահմանված՝ «Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո» դրույթի կիրառությունը, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով սահմանված հանցագործության կատարման դեպքում վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու ժամկետները տարբերվում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածով սահմանված ժամկետներից:

Խնդրահարույց է նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված ավելացված արժեքի հարկի շեմի միատեսակ կիրառման հարցը:

Նախապատրաստվող նյութերի և հարուցված քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ֆիզիկական անձանց կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և

ավելի անգամ անձի սեփականություն կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի գույքի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց ապրանքի մատակարարման որոշ դեպքերում ԱԱՀ-ի շեմը՝ 58,35 մլն դրամը, չի կիրառվում: Նշված խնդիրների կարգավորման հնարավոր տարբերակները դեռևս վերլուծման և շահագրգիռ կողմերի հետ քննարկման փուլում են:

Եզակի չեն դեպքերը, երբ գույքի օտարումից առաջացած հարկային պարտավորությունների կատարումից խուսափելու նպատակով գործարքի կողմերը դատական կարգով գործարքը անվավեր ճանաչելու հայցադիմում են ներկայացնում և արդյունքում քրեական գործը դատական հեռանկար ունենալու առումով հայտնվում է փակուղում:

Նմանօրինակ գործերով կատարված հետագա ստուգողական գործողությունների արդյունքում պարզվել է, որ որոշ դեպքերում գործարքը անվավեր ճանաչվելուց հետո գործարքի առարկա հանդիսացող գույքը զարտուղի ճանապարհներով և քողարկված գնով կրկին վաճառվել է միևնույն գնորդին:

Գործարքն անվավեր ճանաչվելուց հետո գործարքի առարկա հանդիսացող գույքը քողարկված գնով միևնույն գնորդին կրկին վաճառելու դեպքերը բացահայտելու, նշված գործարքներից առաջացող հարկային պարտավորությունների չափը պարզելու նպատակով նշված դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերով ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության գրասենյակում վարվում է առանձին հաշվառում, և դրանց վարույթները կարճվելուց հետո գործարքի առարկա հանդիսացող գույքի նկատմամբ սեփականության իրավունքի հետագա փոփոխությունները ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից պարզելու ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում տվյալները փոխանցելով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչություն՝ ուսումնասիրություններ կատարելու:

Ելնելով վերոգրյալից.

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանը, հատկապես կարևոր գործերով քննության վարչությանը, ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչությանը, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին՝

Մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի անգամ անձի սեփականություն կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման արդյունքում հարկերը չվճարելու դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով քննվող քրեական գործերով և նախապատրաստվող նյութերով անձանց արարքներին իրավաբանական գնահատական տալիս

առաջնորդվել ՎԴ/0811/05/15 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ ձևավորված իրավական դիրքորոշումներով:

2. ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանը՝

1) ՀՀ ԿԱ ՊԵԿ պատկան մարմինների ներկայացուցիչների հետ կազմակերպել քննարկումներ՝ հարկային մարմինների կողմից ֆիզիկական անձանց հարկային պարտավորությունների չափի վերաբերյալ նախնական հաշվարկ կազմելուց և նրանց ծանուցելուց հետո վերջիններիս կողմից հաշվետվություններ ներկայացնելը բացառելու օրենսդրական կառուցակարգեր սահմանելու մասին նախաձեռնությամբ հանդես գալու նպատակով,

2) ապահովել, որպեսզի ՀՀ ԿԱ ՊԵԿ կազմում գործող քրեական հետապնդում իրականացնելու լիազորություն ունեցող մարմինները իրենց գործողություններով անհիմն և ապօրինի չմիջամտեն որևէ բարեխիղճ տնտեսավարող սուբյեկտի գործունեությանը: Վերացնել նշված պահանջին չբավարարող ցանկացած որոշում՝ ապահովելով վարույթի մասնակիցների խախտված իրավունքների վերականգնումը:

3. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանը՝

կազմել և ՀՀ դատախազության համակարգի դատախազություններին և ՀՀ ՊԵԿ ուղարկել ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից կազմված՝ 2016 թվականի ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման ու քննչական վարչություններում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի՝ առերևույթ հատկանիշներ պարունակող հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով հարուցված քրեական գործերի նախաքննության և մեղադրանքի պաշտպանության վիճակի վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքները: